ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

"08" հունվարի 2013թ. № 2-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ «ՇԻՆՈՒՀԱՅՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» (ՀԱՄԱՏԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ «ՏԱԹԵՎԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ», «ՎԵՐԻՇԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ԵՎ «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ») ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՍՏՈՒԳՈՂ Կ.ՄԱԼԻՆՑՅԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի մայիսի 31-ի N 732-Ն որոշման 3-րդ կետի 3) ենթակետի պահանջների,**կ ա ր գ ա դ ր ու մ եմ.**

1.2013թվականի հունվարի 8-ից լուծել «Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» (համատեղության կարգով «Տաթևի առողջության կենտրոն», «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» և «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան») փակ բաժնետիրական ընկերությունների վերստուգող Կատարինե Մալինցյանի հետ 2011թ. ապրիլի 13-ին կնքված N3 աշխատանքային պայմանագիրը:

2.«Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» (համատեղության կարգով «Տաթևի առողջության կենտրոն», «Վերիշենի բժշկական ամբուլատորիա» և «Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան») փակ բաժնետիրական ընկերությունների տնօրեններին՝ վերստուգող Կատարինե Մալինցյանի հետ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2013թ. հունվարի 8
ք. Կապան